

Սուրբ Հիսուսի մասին



Լինդսի Թաններ

Հիմնված է իրական պատմության վրա:

Միան շատ ոգևորված էր: Նա առաջին անգամ էր եկեղեցի գալիս: Միսիոներները նրա ընտանիքին պատմել էին այս Եկեղեցու մասին: Նրանք որոշել էին գալ:

Միան նայում էր իր շուրջը: Սեղանին նա տեսավ սպիտակ սփռոց: Դրա տակ ինչ-որ բան կար:

«Ի՞նչ կա այդ սփռոցի տակ»: Միան հարցրեց միսիոներներից մեկին:

Քույր Հենսոնը ժպտաց: «Դա հաղորդությունն է»:

Հաղորդություն: Դա մի առանձնահատուկ բառ էր: Միան լսել էր, թե ինչպես էին միսիոներները պատմել դրա մասին մայրիկին ու հայրիկին: Բայց նա վստահ չէր, թե ինչ է դա:

Բոլորը մի երգ երգեցին: Երկու տղամարդ բարձրացրին սպիտակ սփռոցը: Դրա տակ սկուտեղներով հաց էր դրված: Միան նայում էր, թե ինչպես էին նրանք մանրացնում հացը:

Երգից հետո մի մարդ աղոթք ասաց: Մեկ ուրիշը հացը բաժանեց բոլորին:

«Հացն օգնում է մեզ հիշել Հիսուսի մարմինը»,- շշնջաց Քույր Գարսիան:

Միան վերցրեց մի կտոր հաց: Նա պատկերացրեց, թե Հիսուսը կանգնած է իր առջև:

Ապա հնչեց մեկ այլ աղոթք: Մի մարդ փոխանցեց փոքրիկ ջրի բաժակներով սկուտեղը:

«Ջուրն օգնում է մեզ հիշել Հիսուսի արյունը»,- շշնջաց Քույր Գարսիան: «Նա մահացավ մեզ համար, քանի որ Նա սիրում է մեզ»:

Միան վերցրեց մի բաժակ ջուր: Նա մտածեց այն մասին, թե որքան է Հիսուսը սիրում իրեն: Նա այնպիսի զգացողություն ունեցավ, ասես Հիսուսն ամուր գրկում էր իրեն:

Ավելի ուշ Քույր Հենսոնը Միային տվեց Հիսուսի փոքրիկ նկարը: «Մենք ուտում ենք հացը և խմում ենք ջուրը, որ հիշենք Հիսուսին և խոստանանք հետևել Նրան»: Նա ժպտաց: «Ի՞նչ ես դու մտածում հաղորդության մասին»:

Միան նայեց Հիսուսի նկարին: Նա հիշեց իր ունեցած ջերմ զգացումը: Նա ժպտաց: «Դա հրաշալի էր: Ես սիրում եմ Հիսուսին»: ■

«ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԴՐՈՒՆԴԱՐՇ», ԸՍՏ՝ ԱՆԴԵՐՍՈՆԻ, ԵԿԵՂԵՑԻՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԹՈՒՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՒՑԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ,-ԿԱՐՈՒՑԱՐԿՈՒՄԸ՝ ԴԵՐ ՋՈՒՄՈՒՐ

Հեղինակն ապրում է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգում: